— Յովնան է իմ անունս,— պատասխանեց նա անխռով:

— Դո՞ւ ես Յովնան Խութեցին:

— Այո, ես ինքս եմ:

— Եւ ինչպէ՛ս կը համարձակիս դու, անարգ, վատ եւ անհաւա՛տ շուն, այս քաղաքը մտնել. չե՞ս գիտէր թէ ես Բուղայ հոս կը նստիմ, ես ամենակարող փոխանորդ Մարգարէի յաջորդին:

Իսկ Յովնան, այս նախատական եւ պարծանաց խօսքերուն՝ գլուխն եւ յօնքերը վեր առնելով արհամարհանաց աչք մը նետել բաւական համարեցաւ:

— Ի՛նչ, ինձի պատասխան չե՞ս տար, դու չե՛ս գիտէր ուրեմն թէ ո՞ւր կը հասնի իմ կարողութիւնս: Այս խօսքերը զրուցելով՝ վագրը աղրայները կը կրճտէր եւ թունաւոր աչքեր կը փայլեցնէր դիմացնին. բայց դարձեալ պարտաւորեցաւ Յովնանու անխռով եւ սայրասուր հայեցուածքին առջեւ խոնարհիլ եւ այլուր շրջել աչքերը եւ լռել: Ան ատեն Յովնան սկսաւ հանդարտ ձայնով խօսիլ.

— Նախ, դու եթէ քու Մարգարէիդ խօսքը յարգէիր՝ զիս ոչ երբեք անհաւատ պիտի անուանէիր. վասնզի պէտք էիր գիտնալ թէ ես միայն աստուած մը կը պաշտեմ արարիչ երկնի եւ երկրի. իսկ իմ համարձակութեանս յայտնի նշանն էր, թէ վատութիւնը շատ հեռու բան է ինձմէ, եւ դու եթէ յիշողութիւն եւ միտք ունենայիր պէտք էիր յիշել թէ այդ Խութեցի Յովնանն է, որ քու նախորդ Ապուսէթի որդի Իւսուֆ իւր զօրքերով բնաջինջ ըրաւ ի Մուշ. նոյն Յովնանն էր, որ Բռնաշեն քու յիսուն հազար հոգուոյ մէկ բանակդ զարկաւ ջարդեց եւ փախուց, նոյն Յովնանն է, որ քու զօրավարդ Ժիրակ փոքր գնդով հարուածեց եւ ծաղրեց, նոյն Յովնանն է, որ սոյն այս Դվնայ դռան մօտ՝ քու աչացդ առջեւ իւր ազգին դաւաճաններն ու մատնիչները կախաղան հանեց, եւ երկու հարիւր հոգուով քու հազարաւոր խումբերդ Շիրակ, Արտահան եւ Արտանուշ զարկաւ եւ կորակոր հալածեց: Եւ հիմա որ աստուած այդ Յովնան քու ձեռքդ մատնեց,